

ԵՒԵԳՆԷԼ



1-2

(208-209)

Հունվար-փետրվար 2024

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - 100


Տարին սևակյան է, և արժանին մատուցելով մեծ բանաստեղծի հիշատակին՝ Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Գյումրու գրասենյակի նախաձեռնությամբ ՇԻՐԱԿԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ կենտրոնի սրահում 2024թ. փետրվարի 7-ին տեղի ունեցավ Համազգայինի Հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ տպագրված՝ Պարույր Սևակի 100-ամյակին նվիրված, բանաստեղծի 100 բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսը: Իրենց սրտի խոսքն ասացին գրասերները, իսկ գրականագետ Կարինե Մարտիրոսյանն իր վերլուծական խոսքում նշեց. «Բանաստեղծի «Նորոթյա աղոթքը» գալիս է էջելու մի կողմից՝ հավատի ու լույսի, մյուս կողմից՝ խավարի ու անհավատության գորշ ծանծաղուտը...»:

*«Լույս զվարթ» են երգում իմ մտքի մեջ
Եվ «Առավոտ լուստ»...
(Պարույր Սևակ, «Եղիցի լույս»
շարքը)*

Պարույր Սևակ բանաստեղծի, նրա ստեղծագործությունների, հայտնի և նորահայտ էջերի մասին, անշուշտ, բազմաթիվ անդրադարձներ են եղել բոլոր ժամանակներում: Այս խոսքը թող նրանցից մեկը դառնա՝ մեկ այլ դիտանկյունից՝ որպես խոնարհումի վկա այս՝ հոբելյանական տարվա շրջանակներում և իբրև ծագած մեծագույն հարցին ի պատասխան, թե բանաստեղծի ո՞ր ստեղծագործությունն ընտրել որպես նշանակետ՝ արդեն եղած

բազմաթիվ անդրադարձների համատեքստում: 1969 թվականին, երբ գրականության բազմաթիվ մեծարժեք գործեր կրկին հայտնվեցին գրաքննության խոշորացույցի ներքո, անմասն չմնաց նաև Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուն: Եվ միայն տարիներ անց՝ 1992-ին, գիրքը դրվեց ընթերցողի սեղանին: Սեր խոսքը վերաբերում է ժողովածուի միայն համաձայն շարքին:

անեղծ-իսկական դեմքը: Ահա պարզ, դյուրըմբռնելի իրողություններից մեկը, որ վեր է հանում գրողը՝ կյանքի կոչելով Լույսը, լույ ամենակալ Լույսը: Եվ միայն գորուզիչներ պայքարի արդյունքում՝ գրողի ներսից ծորում է այն հոսելով էջերում բանաստեղծությունն առ բանաստեղծություն: *Առավոտ լուստ՝, Առավոտ մի ջի՛նջ, Ձի՛նջ, ինչպես... ոչի՛նջ...* Գրողական նոր՝ գոնե միայն



*Որ աշխարհում
Լույ մի-միա՛կ ստվեր մնա,*

*Այն էլ միայն երկնի՛ վրա՝
Լույ անձրևի՛ ստվերը կոր՝
Ծիածա՛նը...*

Ապա կրկին ու կրկին Լույսի ծնունդի և կամ թե անմեռ գոյության պահանջն է՝ «Թողություն տուր, Տեր, ծանրը խավարին» խնդրանք-պայմանով ի տրիտուր վերջինիս ընդմիշտ-անվերադարձ հեռացումի: Եվ թող ժամանի Արշալու՛յսը:

*Եթե մթության խտացումից է
միշտ լույսը ծնվում,
Մի՞թե մեներ կյանքում քիչ մուր
ենք ծամել՝ հացի փոխարեն...
...Մութը՝ անասել՝ կարկատանել
է մեր աչքե՛րն անգամ,
Իր գույնն է խառնել և մեր
արյանը,
Կարմիր արյանը,
Որ չորանալիս սևանում է միշտ,
Եվ չոր արյանը էլ սևն է
շատանում,
Այսինքն՝ մութը:*

Մյուս կողմից՝ հեղինակը կարևորում է մարդկային իրական այնպես՝ ու երբեմն կամ ամենից հաճախ՝ անկախ մարդուց՝ պայմանների առկայությունը, երբ մութն է հետևից, մութն է առջևից, իսկ մարդը «երկու մթան նեղլիկ արանքում» սեղմվում է կամա թե ակամա, բայց սթափության կոչն է կիզակետում, թե՛

*Զբթանանք այնքան, որ կար-
ծենք,
Որ եթե մթան խտացումից է միշտ
լույսը ծնվում,
Ապա կծնվի ինքնաբերաբար՝
Ինչպես Հիսուսը Միածին Կույսից՝
Մինչև իսկ առանց... «Եղիցի
լույս»-ի...*

Ահա: Եվ որտե՞ղ է աղբյուրը լույսի. մի՞թե այն իսկապես մթության խտացումից է ծնվում, ինչպես «հունցում» է միտքը գրողը: Հետևում է ևս մի պատկեր՝ կրկին ի հակադրություն Լույսի և իր՝ Լույսի ակնկալիքով. «Վառեցեք լույսերը»: Հետո՞ ինչ, որ.

*Երազել է տալիս մութը,
Իսկ երազել մեներ չենք ուզում:*
Եվ Լույսի ծնունդն ամենուր է՝ տողերում ու տողատակերում, երազում թե հարթման, ու միշտ, հար և միշտ հաղթում է Լույսը՝ անկախ մարտ ու պայքարի տեսակից, անկախ անգամ իր՝ Լույսի տեսակից՝ օր է, արշալույս է, արև է թե մաքրություն, և կամ թե այն պարզ մի մեղեդի է՝ վսեմ տաճարում: Կարևորը՝ մթնոլորտը նույն պարզությամբ վերածվում է շքեղ «Լուսուլորտի»: Եվ հենց Լույսով է ստեղծվում երկինք-երկիր, տիեզերք-երկիր անմեկնելի-անըմբռնելի կապը:

*Պատացել է մութը արդեն վա-
ղուց:
Ես հայացքով զարկվում նրա
խավար պատին՝
«Լույս զվարթ» են երգում իմ
մտքի մեջ
Եվ «Առավոտ լուստ»:*

Սա բանաստեղծի երգն է՝ հի-րավի բարձրածայն ու հար լսելի և անշուշտ՝ ի պահ բոլոր ժամանակներին...

Կարինե
ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՆԱՂԱՐՏ ՊԱՇՏԵՔ ՄԱՅՐԵՆԻՆ

Ուսումնական Ազատական կուսակցության Շիրակի շրջանակի նախաձեռնությամբ և Հանրապետական վարչության հաստատմամբ 2022 թվականից Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ՌԱԿ Շիրակի շրջանային վարչությունը ավանդական է դարձրել փետրվարի 21-ին Մայրենի օրը տոնելու և մայրենի լեզուն անաղարտ պահող Շիրակի մարզի ընտրյալ մտավորականներին ամենամյա շնորհակալագրերով պարգևատրելու գեղեցիկ միջոցառումը:

Այս տարի ևս Շիրակի շրջանակը մեծարանքով ու խոնարհումով իր գնահատանքը հայտնեց ՌԱԿ Հանրապետական վարչության «Մայրենի անաղարտ պահելու համար» շնորհակալագրերի հանձնումով՝ մայրենի լեզվի

մաքրությունը Շիրակի մարզի համայնքներում և Գյումրի քաղաքում երկար տարիներ քարոզող նվիրյալների՝ մանկավարժության, արվեստի ու գրականության, լրագրության և հոգևոր ոլորտների մտավորականության հրաշալի մի փաղանգի:

2024-ին նույնպես, ՌԱԿ Շրջանային վարչության ընտրությամբ կուսակցության շնորհակալագրով պարգևատրվեցին ՀԱԵ Շիրակի թեմի Գյումրիի «Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցու հոգևոր հովիվ տ. Փավստոս քահանա Գալստյանը, մանկավարժ, բանասեր, հայոց լեզվի և գրականության երկարամյա ուսուցչուհի, Ախուրյանի Ն. Աղբալյանի անվ. վարժարանի հիմնադիր Խանում Պապիկյանը, ՇՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Սուսաննա Ջաքարյանը, երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու,

դոցենտ, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տնօրեն Հասմիկ Հարությունյանը, բանաստեղծներ՝ ՀԳՄ Շիրակի բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետյանը և Ռոզա Հովհաննիսյանը, էթնոհոգեբան, հոգեբանական գիտ. թեկն., դոցենտ Կարինե Սահակյանը, Հայաստանի Հանրային ՀՈՒՇ Շիրակի մարզի թղթակից Քրիստինա Սկրտչյանը, ՀՀ վաստակավոր արտիստ, Գյումրու Վ. Աճեմյանի անվ. պետ. դրամատիկական թատրոնի դերասան Ռաֆիկ Խառատյանը, ռեժիսոր, դերասան, թատերական մանկավարժ, ՌԱԿ անդամ Վաղարշակ Ասատրյանը, անհատներ, որոնք մայրենի անաղարտությունը իրենց համար վաղուց արդեն կենսակերպ են համարում: ՌԱԿ Հանրապետական վարչության կողմից պարգևատրվողներին շնորհակալագրերը և գիրք-նվերները հանձնեց ՌԱԿ ՀՎ

ատենադպիր, Շիրակի շրջանակի ատենապետ Հովիկ Կարապետյանը:

Միջոցառումն սկսվեց Տերուսական աղոթքով և տ. Փավստոսի հոգևոր խոսքով: Պարգևատրվողները իրենց լույսներում ներկայացրին օրվա խորհուրդը, հայոց հիմնավորը լեզվի զարգացումը, նրա դերը հայ ժողովրդի պատմության և մշակույթի մեջ: Լեզուն պիտի անաղարտ պահի հայ ընտանիքը, դպրոցը, բուհը, հեռուստատեսությունն ու լրատվամիջոցները, ողջ համայնքում այսպես արտահայտվեցին իրենց խոսքերում տոնի բանախոսները: Միջոցառման մասնակիցները մտահոգված էին նաև մեր օրերում լեզվական տարածված սխալներով ու լեզվի ուսուցման բազմաթիվ խնդիրներով՝ կարևորելով լեզվի պահպանումը որպես պետական մոտեցման անհրաժեշտություն:

ՌԱԿ ատենադպիր
Հովիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Մարիամ Ասլամազյան
ДА ВТАР
ЖИЗНИ

ՀԱՅԱՅԲ՝
ԳԱՐԻ ԲԱՐՁՈՒՆԵՔԻՑ

ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, միջազգային մրցանակների դափնեկիր Մարիամ Ասլամազյանը ապրեց ուղիք հարյուր գարուն:

1906-2006 թթ.՝ փորագրված է Կոմիտասի անվան զբոսայգու՝ հայ մեծերի Պանթեոնում հանգչող գեղանկարչուհու տապանաքարին:

Եվ նրան երկարակեցություն պարգևեց բոլոր բարիքների մայրը՝ աշխատանքը...

Ծնվել է Ալեքսանդրապոլից (Գյումրի) ոչ այնքան հեռու, Բագրատունիների արքայանիստ Շիրակավանում (նաև՝ Երազգա-



վորս), Ախուրյան գետի կանաչավետ, գեղատեսիլ աջափնյակում (այժմ սահմանի թուրքական կողմում է...):

Ջրաղացատեր և բազմահմուտ մեխանիկ Արշակ Ասլամազյանի շեն, հյուրասեր օջախուն, ինչպես հեքիաթներում, հասակ են առել ընտանիքի յոթ աղջիկն ու միակ որդին, որոնք, բոլորն էլ բարձրագույն կրթություն ստանալով դարձել են առաջատար մասնագետներ, երկրի ու ժողովրդի համար արժանավոր մարդիկ: Նրանցից Մարիամն ու Երանուհին հայտնի գեղանկարիչներ դարձան: Վաղուց անտի նրանց շատ ստեղծագործություններ զարդարում են երևանյան, դրեզդենյան, տրետյակոպյան և աշխարհի ավելի քան քառասուն քանդաքաններ ու պատկերասրահներ: Որպես գեղագետ քույրերի սրտի վաղեմի փափագ՝ նրանք իրենց ստեղծագործությունների մեծագույն մասը՝ շուրջ 660 գեղանկարչական և խեցգործական աշխատանքներ, նվիրաբերեցին Լենինական (այժմ Գյումրի) քաղաքին, ուր 1987 թվականից գործում է «ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱԿ»-ը:

Իր արգասավոր կյանքի 95-րդ տարում, վրձինը գրիչով փոխարինելով, Մարիամ Ասլամազյանը Մոսկվայում, ցավոք սրտի քիչ ընդամենը 500 օրինակով, լույս ընծայեց «ԿՅԱՆՔԻՍ ԴՎԹԱՐԸ» ինքնակենսագրական հուշակատարումների գիրքը (ի դեպ, մեկն էլ նկարչուհին ջերմ ընծայականով ժամանակին ինձ է նվիրել): Այն, իրավամբ, հայացք է կյանքին դարի բարձունքից...

«Դավթարը» այսօր էլ ընթերցվում է մեծագույն հետաքրքրությամբ, քանզի հուշակատարումների գիրքը բովանդակում է 20-րդ դարի պատմական-ճանաչողական, հոգևոր-մշակութային շատ ուշագրավ նյութեր:

Առանձնապես հարուստ ու գունեղ է հեղինակի բազմաթեղուն, մեկդարյա կյանքի ճանապարհին հանդիպած անվանի մարդկանց «պատկերասրահը»՝ Նիկողայոս Մառ, Նադեժդա Կրուպսկայա, Ակսել Բակունց,


Ավետիք Իսահակյան, Մարտիրոս Սարյան, Սերգեյ Մերկուրով, Վերա Մուխոմա, Արամ Խաչատրյան, Ինդիրա Գանդի, Վազգեն Վեհափառ... Ճշմարիտ է թեև նրանք իրենց հարուստ կենսագրականներով հանրաճանաչ երևելիներ են, սակայն «Դավթարի» ընթերցողը, հեղինակի ընկալմամբ ու մեկնությամբ, նշանավոր այդ մարդկանց ճանաչում է նորովի:

Մ. Ասլամազյանի «Կյանքիս դավթարը» ռուսերեն հրատարակված գրքից, իմ թարգմանությամբ, ստորև ներկայացնում են «Թուրքերը Ալեքսանդրապոլում. 1918,1920-1921 թթ.» պատումը: Այստեղ հեղինակը սրտի կսկիծով է վերհիշում հայրենի քաղաքը գրաված բարբարոս զավթիչների հրեշավոր, անմարդկային վայրագությունները, դեպքեր, որոնց ականատեսն է եղել նուրբ, զգայուն հոգի 12-ամյա աղջնակը...

Մեկ հավելում ևս. տույն իրապարակումը, կարծում եմ, ոչ միայն պատմական-ճանաչողական արժեք ունի, այլև այն սթափության և զգոնության անուղղակի կոչ է նախևառաջ հայ ժողովրդի այն հատվածին, որը մեր անցյալի արյունոտ պատմության դասերից դեռևս ճիշտ հետևություններ չի արել և դեռ հավատում է... «Լավ» թուրքին... Նույն Գյումրիում փորձում են փակել ռուսական ռազմաբազան, որի առկայությունը, արդարացի լինեմբ, հայ-թուրքական սահման անխախտ պահելու երաշխիքն է եղել և կա...

Մինչդեռ թուրքը միշտ էլ թուրք է... «Ու հեռու է մինչև մարդը իր ճանփան» (Յու. Թումանյան):

Սերժ ՍԱՆՈՒԿՅԱՆ



ԹՈՒՐԵՐԸ
ԱԼԵՔՍԱՆԳՐԱՊՈԼՈՒՄ.
1918,1920-1921ԹԹ.

Իմ հիշելով թուրքերը Ալեքսանդրապոլում եղել են երկու անգամ: Առաջինը 1918 թվականին էր, երբ մենք ընտանյոք տեղափոխվեցինք Թիֆլիս: Երկրորդ անգամը 1920-ին էր, քաղաքի վրա վրա կրկին սև ամպեր կուտակվեցին: Թուրքերը Կարսը առնելուց հետո անկասելիորեն շարունակում էին հարձակումը, իսկ մեր բանակն այնքան արագ էր նահանջում, որ ժողովուրդը տարհանվել, հեռանալ չհասցրեց:

Ուշ աշուն էր, ծյունախառն անձրև էր տեղում, ամենուրեք ծնկահաս ցեխ: Փախստականները, գունակը ու նահանջող բանակը իրար էին խառնվել: Սոված ու մրսած մարդիկ անհիծելով ու արցունքներով աճապարում էին իրենք էլ չգիտեմալով թե ուր...

Հարևան գյուղերից եկած փախստականներով լիքն էր մեր տունը: Քաղաքի մատույցներում արկեր էին պայթում, այրվում էին պահեստները: Մարդիկ ջարդում-փշրում էին կողպեքները և կողոպտում խանութները: Փողոցներում դասալիքների դիակներ էին վրամները փակցված «հայրենիքի դավաճաններ» մակագրությունը:

Հայրս դեռևս տուն չէր եկել ջրաղացից, իսկ սպասելն այլևս անհնարին էր: Հորեղբայրս մորաքրոջս ու ավագ քույրերիս հետ վճռեցին հեռանալ քաղաքից, քանզի չէր կարելի դեռատի աղջիկներին թողնել թուրքերին...

Հայրիկին ուշ գիշերով բերեցին տուն՝ քառասուն աստիճան ջերմելիս: Նրան բարեկամներն էին վերցրել կենճամապարհից: Այսպիսի վիճակում մեր տարհանվելն այլևս հնարավոր չէր, և մենք մնացինք...

Ամբողջ գիշեր մարտեր էին ընթանում, և առատորեն անձրևում էր: Լուսադեմին ամեն ինչ մեկն խաղաղվեց և մեռելային անդորում հեռուներից սկսեցին մեզ հասնել փողային նվազախմբի հնչյունները, թուրքական ազգա-

յին օրհներգն էր կատարվում: Շուտով երևացին նաև զորասյունները: Արշավում էր թուրքական հեծելազորը, և այդ գազաններից յուրաքանչյուրը թամբերին մի-մի ցից էր ամրացրել, որոնց վրա խրված էին սպանված հայերի կտրված գլուխները... Ամենահավոր ու նողկալի պատկերը մեծահասակ կնոջ գլուխն էր, որի երկար-ճերմակ վարսերը ծածանվում էին քամուց: Հարբած ասկյարները իրենց հաղթանակն էին տոնում: Դա մի հրեշավոր, սուկալի տեսարան էր:

Ամուր փակվել էին բոլոր տների դռները: Սակայն, միևնույն է, թուրքերը խցկվում էին ամենքի տունն էլ, ջարդում, փշրում կամ այրում էին գոց դռները, աղջիկներ էին պահանջում և հափշտակում ինչ որ տեսնեին: Սպանում էին ում ասես և որտեղ ասես:

Մարտ ամսին մայրիկիս մոտ կծկանքներ սկսվեցին Նա միշտ տանն էր ծննդաբերում երկարատև ու տանջահին: Ամբողջ գիշերվա խավարում տառապագին ցավեր քաշեց մայրիկը և առավոտյան լույս աշխարհ բերեց Թամարային՝ իմ յոթերորդ քույրիկին: Ինձ ուղարկեցին մեզանից ոչ այնքան հեռու ապրող մորաքրոջը կանչելու: Փողոցի անկյունում երկար հյուսքերով փախչող մի աղջիկ տեսա, որին հետապնդում էր թուրք ասկյարը: Դժբախտը շնչակտուր նետվեց դեպի դարպասը, սակայն նրա երկայն հյուսքերից ամուր բռնեց թուրք ասկյարը և քարշ տվեց դեպի իրեն. աղջիկը ծչում էր, աղերսագին օգնություն կանչում, բայց ոչ ոք չհասավ... Նույն պահին հանկարծ ինչ-որ մեկը ինձ ուժով դռնակից ներս անձանոթ տուն տարավ: Պարզվեց՝ որ մերոնցից էր, և նա ինձ անվտանգ տեղ թաքցրեց: Ես ընդամենը տասներկու տարեկան էի: Դրանից հետո ինձ այլևս ոչ մի տեղ չէին թողնում կամ ուղարկում, թեպետև ես դեռահաս, միաբարիկ և ոչ ուշագրավ աղջնակ էի:

Մարիամ
ԱՍԼԱՄԱԶՅԱՆ



ՎԱՆԵՐԻ
ԱՆԱՆԻԿՅԱՆ-70

ԾՆՆԳՎԱՅՐ-1

Աբուլն իմ վրանն է ծյունաբազ, Փարվանան՝ երկնակախ օրորոց, Ամպերի փրփուրն՝ ինձ վերմակ, Ջավախքը՝ գուրգուրող մոր ծոց: Երկինքը իմ պատուհանն է կապուտակ, Արտույնները՝ բարի հեքիաթասաց, Արևն՝ իմ վրանից կախ զանգակ, Արտերն՝ օրհնված սեղանից: Հովերն՝ ինձ հետ խաղացող ընկեր, Ծաղիկներն՝ իմ աչքերին ծիծաղ, Իմ լեզուն սարի աղբյուրն է մեր, Ես ոգին՝ այս բնության չքնաղ:

ԾՆՆԳՎԱՅՐ-2

Քո ամեն մի ձորի ծոցում՝ Մի պլպլան աղբյուրի աչք, Քո ամեն մի քարի շրթին՝ Հրաշքների վառվող շաղիկ: Քո ամեն մի սարի փեշին՝ Երազներով ծոցվորած արտ, Ու արտերի ոսկեծովի Ու տապի մեջ պարող լորիկ: Աբուլը՝ պապ Գլխին դրած ծյունն փափախ, Փարվանան՝ տատ, Դեմքին՝ լուսե քողը շարմաղ, Երկինքը՝ հանց աղոթքի տուն, Հողը՝ ծաղկի ուլունքաշա՛ր... Արդյոք կա՞ ուրիշ մի տեղ Այսքան բարձրիկ, նախշուն աշխարհ:

Առած իլիկը իր հին Մայրս բուրդ էր մանում, Արծաթ լույսը մագերիմ, Մի մեղմ թափած հայացքում: Մանվում էր բուրդն սպիտակ Ու թելվելով կարկաչում, Ասես մորս ձեռքում տաք Չյունն կարոտն էր հալչում: Սուզված անհուն հուշերում, Նուրբ մատներին՝ թեթև դող, Ասես մագերս էր շոյում Մայրս հոգնած ձեռքերով:

Աշուն, քնք՛ւշ, դեղնահե՛ր, Աշուն, տխուր հեռացում, Իմ հոգեհույզ կորած սեր, Կարոտ-թախծ իմ անհուն: Այնպես շքեղ ես զուգվել, Այնպես գունեղ ու շռայլ, Այնպես խանդոտ հրդեհվել՝ Գեղուհու պես ոսկեփայլ: Աշուն, քնք՛ւշ, դեղնամա՛ծ, Հուշիր դու ինձ, թե ինչպես Հոգուս կարոտն ամբարած Քեզ պես անբոց այրե՛մ ես:

Օրերի մեջ վեր ու վարող Դարձած թախծ մի հեզ, Քարշ ենք գալիս փողոցներով Իմ երազն ու ես: Հույսից խաբված, օրորվելով՝ Խորը հարբածի պես Անցնում ենք լուռ, քայլանուրի Իմ երազն ու ես: Մեր փնտրածն ենք գտնում հանկարծ, Որ լուռ երգ էր մեզ պես, Հրճվում ենք հարստացած Իմ երազն ու ես: Օ՛, ձեր առջև աշխարհ ու կյանք Ընդվզումով մի կեզ, Տեղ ենք փնտրում արևի տակ Իմ երազն ու ես:

ԼՈՒՌԹՅԱՆ
ՁԱՅՆԵՐ

1.

Երբ չկա մանող իլիկը լեզվի, Էլ ո՞նց երկարի իմ խոսքի թելը, Ի՞նչ կախարդանքով ուղրվի՛, հյուսվի՛, Որ տեսնեք հոգուս գորգապատկերը:

2.

Ինչպե՞ս թարգմանեն խոսող ձեռքերս Համր զանգերիս դողանքը քարե, Եթե վերածնեի այդ սեպագրերը, Գուցե հռչակվեի մտքի Մարգարե:

3.

Ա՛խ, ես ո՞նց փշրեմ անտես խզումը, Որ բաժանում է ինձ ձայնե աշխարհից, Պատեպատ խփվող ծանր հուզումն, Մի ելք չի գտնում արցունքի հորից:


4.

Ասում են՝ լռությունը Աստօն լեզուն է, Միգուցե ինքս էլ՝ «Սուրբ» թարգմանիչը,

Ողջ լուռ տիեզերքն իմ հարազատ տունն է, Ես՝ Տիրոջ տաղերգուն և... ցավի ճիչը:

Մարդ կա, լռություն է փնտրում, Ջրուցելու ինքն իր հետ, Ես չփնտրած գտել եմ Մի լռություն առհավետ, Սակայն աշխարհն իմ անթույլ Ինձ ոչնչով չի հուզում, Շուրջս եմ նայում կարոտով, Կյանքի աղմուկն եմ երազում:

Դեռ չեմ բարեկամացել իմ խորհրդավոր լռության հետ, Երբեք չեմ կարող տեսնել աշխարհը Անձայն... քարացումով, Շատ անհաշտ եմ. Որպես լուռ պայթար նենգ համարացումին, Ծաղկող խոհերիս քնքուշ շիվերից Իմ նոր երգերի Չամբյուղն էմ հյուսում, Լցնում... ձայներով:



Բնագրային թարգմանությամբ հայ ընթերցողի սեղանին է դրվել պարսկական գրականության երևելիներից մեկի՝ պոետ Հաֆեզի գազելների ու քառյակների ժողովածուն: Ժորժ Աբրահամյանը Հաֆեզի պոետիկան արևելյան պոետիկայի վայելելի իր բոլոր գույներով: Հաֆեզի գրքերն իրանում ամենակարգավորում ու վերահրատարակվողն են: Ընդ որում, Ղուրանից հետո այն ամենաշատ հրատարակված և կարդացված գիրքն է:

Իրանագետ, թարգմանիչ ժորժ Աբրահամյանը Հաֆեզի պոետիկան թարգմանել է մեկ տարում: Ասում է իր համար մեծ պատասխանատվություն ու համարձակությունն եղել Հաֆեզ թարգմանելը: «Հաֆեզը, լինելով 14-րդ դարի պոետ, զգալի ազդեցություն է թողել ողջ պարսկական մշակույթի վրա և շարունակում է մնալ ամենաընթերցվածներից և ընթերցվողներից այսօր: Պարսկական պոետիկան ունի մի քանի գագաթներ, ինչպիսիք են Ռումին, Սաադին, Ֆիրդուսին և ուրիշներ, որոնք շատ սիրված են: Այդ գագաթներից մեկը Հաֆեզն է, և մյուս պոետներից տարբերվում է նրանով, որ չափազանց մեծ ժողովրդականություն է վայելում»:

Ժորժ Աբրահամյանն ուսումնասիրել է նաև Հաֆեզին վերաբերող մասնագիտական գրականություն, փորձել հեղինակին ներկայացնել իր բոլոր առանձնահատկություններով: Ասում է՝ հաճախ ստիպված է եղել լեզվական որոշ խոչընդոտների բախվել: Եղել են նույնիսկ քառյակներ, որոնք թարգմանել է մի քանի օրում, այդ ստեղծագործություններն իրենից մեծ էներգիա են խլել: Հայաստանում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպանը Դեսպանի խոսքով՝ Հաֆեզի այս

ՀԱՅԵՐԵՆ ԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԻՐԱՆՅՈՒ ՄԵԾ ԴՊԵՏ ՀԱՅԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐՆ ՈՒ ՔԱՌՅԱԿՆԵՐԸ

հրատարակությունը կարևոր իրադարձություն է՝ մեկ անգամ ևս ընդգծելու երկու երկրի բարեկամական հարաբերություններն ու մշակութային կապերը: «Ուրախ եմ, որ գրքի շնորհանդեսն անցկացվեց ինչպես Երևանի Կապույտ մզկիթում, այնպես էլ Գյումրիում: Հաֆեզի գազելներն ու քառյակները թարգմանվել են շատ երկրներում: Հաֆեզը գրում է սիրո, խաղաղության, արդարության մասին, և այդ ամենը հարկավոր է տարբեր ժողովուրդների մեծացման համար: Ուրախ եմ, որ Հաֆեզը հասանելի է նաև հայ ընթերցողին»:

Հրատարակչության թարգմանական բաժնի պատասխանատու խմբագիր Հասմիկ Եղիազարյանը մշտ, որ «Ձանգակ»-ն առաջին անգամ է անդրադարձում պարսիկ հեղինակի, և որ շատ հրատարակչությունների համար վաճառքի տեսանկյունից ռիսկային են պոետիկա թարգմանելն ու հրատարակելը: Իրենք ռիսկի են դիմել ու վաճառքի ցուցանիշներից զոհ

են: Ընդամենը երկու ամսում վաճառվել է տպաքանակի մեծ մասը: «Վերահրատարակել ենք այն: Գիտեք, գործ ունենք իրանական գրականության երևելիներից մեկի՝ Հաֆեզի հետ, իսկ նրա գազելներն ու քառյակները հայերեն հրատարակելու նախաձեռնությունը թելադրված է նրանով, որ մենք պատմականորեն կապված ենք իրանական մշակույթի հետ, ինչը շատ հաճախ մոռանում ենք, և մենք որոշեցինք այդ կամուրջը լինել և մարդկանց հիշեցնել այդ մասին»:

Հրատարակչությունից վստահեցնում են՝ շարունակելու են հայ ընթերցողին ներկայացնել իրանական գրականությունը: Առաջիկա տարիներին մտադիր են թարգմանելու և հրատարակելու իրանական այլ հեղինակների: Գրքի թարգմանիչ ժորժ Աբրահամյանն այս պահին թարգմանում է իրանցի մյուս երևելի Ռումիի ստեղծագործությունները:

Հովհաննես ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԱՐԵՎԻԿԱ ՄԱՐԳԱՅԱՆ

Ծնվել է Գյումրիում, 21 տարեկան է: Գրում է 8 տարեկանից, զգացական ու ընկալական աշխարհների մեծ փոփոխություններից զուգահեռ՝ փոխվել է և իմ աշխարհընկալումը, հիմա ես ավելի հաճախ թղթի հետ եմ խոսում: Բանաստեղծությունը արձագանքն է իմ լուրջության, ես թղթի հետ ազատ եմ, ես ես եմ, իմ ամբողջ կյանքի սիրահարվածությունը, մեծանկյունը, երջանկությունը մեծանկ թղթին եմ հայտնի: Ես գրում եմ այն, ինչ զգացել եմ, զգում եմ ու մի օր կզգամ:

Երբ վանդակում ես ծնվում, Աշխարհը վանդակդ է, Քանի փոքր ես, թևերդ չեն խանգարում, Մտածում ես, որ աշխարհը չափազանց մեծ է: Այն քիչ-քիչ փոքրանում է, բայց դեռ քո ամեն ինչն է, Ու դու փորձում ես թևերդ վանդակից մեջ տեղավորել: Դու հարմարվում ես, Մոռանում, որ փոքր ժամանակ թռչել գիտեիր, Իսկ հիմա հագիվ ես շնչում արևի մեկունեջ ներս ընկնող ալիքներից:

ՄՐԲԱԶԱՆ ԴՊՂ

Երբ վանդակիցդ քեզ հանում են, դու զգում ես մեծ աշխարհը, Բայց հենց փորձում ես հանել թևերիդ ճնշումն ու Դրանց կենդանության հույս տալ, Վանդակդ արդեն մաքուր է, Ներսում էլ հայելին ու կուտը քեզ են սպասում: Դու նայում ես քեզ ու չես հասկանում, Թե ում են պետք քո սուր կտուցը, Չթափված բմբուլները, Դու: Ո՞վ է հորինել աշխարհը: Ո՞վ է հորինել աշխարհը: Ու ինչո՞ւ ես դու պատկանում բոլորին, Բացի քեզնից:

Վանդակդ մաշվել է: Թևերդ էլ ուժ չունեն թաքնվելու: Բոլորը քեզնով հիացել են, Վանդակիդ հետ խաղացել ու չեն բացել դուռը, որ դու էլ կարող էիր բացել, եթե չվախենայիր:

Կիսաներկայություն

Քեզ մոռանալու համար հիշողության կորուստը քիչ է, Ու ես ինձ կորցրի: Կլոր աշխարհիս ամեն անկյունում անունդ եմ թողել Ու գլորվում եմ բոլոր հնարավոր բութ անկյուններով, Որ գտնեմ ինձ: Սուր անկյուններին դու ես կանգնել, Ես ցավ եմ զգում: Դու գնալու միտք չունես, ես էլ բաց չեմ թողնում մտքերս: Անհանգիստ կողքիդ կանգնել՝ Կորուստդ եմ սգում: Իսկ հայելու վրա սավան չկա, Ու ես տեսնում եմ, որ կողքիս չես արտացոլվում, Ես ապուշի նման աչքերս հառել եմ սովերիդ Ու կախվել հետքերիցդ, Դուռը բաց սպասում եմ քեզ: Ատում եմ սպասելը: Քո գնալը ձգձգվում է: Դրսում ծնե՞մ է: Ես հիվանդ եմ: Հազում եմ անունդ,

Ու արցունքից աչքերիս փոխարեն աչքերդ եմ սրբում, Արգելում ինձ տեսնել քեզնից այն կողմ: Դու կանգնել ես ելքի ու մուտքի մեջտեղում: Իսկ ես շուրթերովդ ինձ ասել եմ զնում եմ: Ուզում եմ, որ գնաս ու տանես հետդ անունդ, Որ ճամպուրակի մեջ հագիվ եմ տեղավորել ու թաքցրել աշխարհից: Հենց վերջապես գնաս, դուռը փակիր. Մրսում եմ կիսաներկայությունից:

Այսօր չեկար, Ու քամին շոյեց մազերս: Ես երազում էի աղջկական մի երազկոտությանը, Չուվում թափանցիկ տարերքին, Ու սև խոռոչը կլանում էր ինձ:

Ես լսում էի՝ Օդում մնացած երեկս Ինչպես էր տանջվում, Լսում էի ժպիտիդ արանքում Խորտակվող հայացքիս Անձայն հիացմունքը: Ու կարող, որ միայն ինձ ու քեզ բնորոշ անգույն հոտ ունի, Տարածվում էր:

Ծնողդ այսօրվա մեջ երեկվա չգալը եմ հիշում: Երանի չնստեի այն անիմաստ քարին, Որի անունը «մեր քար» ենք դրել:

Անորոշությունը Տատանումների մի նոր թափով Հարձակվում է վրաս: Իսկ ես պայքարել չեմ սովորել: Հիմա ես նավակ եմ, Որ մոլորվել է միանման ալիքների մեջ: Կորցրել բոլոր կողմնորոշիչները, Չզայարանները: Անմարդկային զգացումները տարածվել են Դողացող մարմնովս մեկ: Ու հուզմունքից փշաքաղության

հասած մարմնիս վրա Դեռ հիշում եմ մատներդ: Դու ձուլվել ես ալիքներից, Ու ես ուզում եմ խեղդվել: Երևի չեկար: Հիմա ջուրն է շոյում մազերս:

Վերադարձի՛ր, Քանի դեռ ունես զնալու պատճառ, Ուրեմն մնալունը եղել է: Վերադարձի՛ր: Գնալուցդ հետո լույսերը տարան, Գազն ու օդն էլ՝ հետը: Վերադարձի՛ր, Որ անունդ վակուումում տալու փոխարեն Օդը լցնեմ անունովդ: Վերադարձի՛ր, Որ գրողի տարած վերադարձդ Դառնա իմ ամեն օրը: Վերադարձի՛ր Կատվի մլավոցով բացվող արևի հետ, Ու մնա՛ ողջ գիշեր քունս խախտող շների մնան: Վերադարձի՛ր, Ինչպես վերջին անգամ խոստացել էիր գնալուցդ առաջ: Վերադարձի՛ր, Որ հեռանալուդ պարանը չխեղդի սպասումս: Որ սպասմանս կողքին չընկնեմ ես:


Քեզ խեղդում են արցունքներովս, Բայց արոյունքում ես եմ խեղդվում: Ու մառախուղը ճնշում է միտքս, Չյունը խցանում է մտածելու ունակությունը: Քեզ հետ խեղդվում եմ ես: Բայց դու ուժեղ ես...

Ես կմեռնեմ. Քո կողքին ընկնում եմ ես, Դու հակաթույն ունես, Բայց ես ինձ ձեռքերով եմ խեղդում: Մենք իրար չենք փրկի, կսպանենք, Բայց մեծակ ես կմեռնեմ: Մենք իրար փրկելու համար չենք:

Դու կօգնես՝ ճանաչեմ աշխարհը, Ես կօգնեմ՝ ներես քեզ: Ու քեզ կսիրեմ թիթեռի կյանքով՝ Մի օր, բայց մի ողջ կյանք: Ես կմեռնեմ քեզ փրկելու ցանկությունով, Բայց դու չես փրկվի, Կիսմես իմ հակաթույնն ու մի քիչ էլ կապրես: Կկանչես կյանքին, երջանկություն կկրկնես: Էնքա՛ն բան ես բաց թողել երջանկություն փնտրելիս: Իսկ ես չեմ կարողանում տանել քո տառապանքը: Ես քո մահը կվերցնեմ, կզգամ քո ցավը, Քո տեղը կապրեմ ու քո սխալներից կընկնեմ: Ես թո՛ւյլ եմ, թե՞ չափից շատ եմ ուժեղ, Որ քո ցավազրկողն եմ դարձել: Ես թո՛ւյլ եմ, թե՞ քեզնից եմ թույլ դարձել: Դու իմ կյանք չես գա, ես էլ չեմ ապրի ինձնով: Քո ցավը կվերցնեմ, կընկնեմ՝ անունդ կրկնելով:

Երբ որ գինին հասնի գլխիդ, Սիրտդ էլ թո՛ղ մի քիչ արբի, Ու արցունքդ՝ աչքիդ հասնող, Սրտիդ արբած վերքը սրբի, Թող մրմռա վերքդ մի քիչ, Արցունքդ թող առաջ գնա Ու հենց հասնի թթի ծայրին, Քիթդ էլ մի քիչ թող մրմռա:

Թե կարոտես, չիմանա՛ ում, Աչքդ մեկի ճանփին մնա, Երկու աչքերդ աղոտ հիշես, Տերը դրանց ամհայտ մնա: Մնաս դու լուռ ու անհանգիստ, Չհասկանաս, թե ով էր նա, Իսկ նա, հեռվում մեղմ ժպտալով, Քո աչքերով լուռ արբեմա, Ու դեմքը քո մոռանալով՝ Հարբած աչքին մրմուռ կաթա:



Ռոզա Յովհաննիսյանի հարցազրույցը քանդակագործ Արթուր Գևորգյանի հետ

ՔԱՐԵ ԵՐԳԵՅՈՆ. ՕԿՏԱՎԱ

«Մտեք նեղ դռնով. ինչքան լայն է դուռը, և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքան անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. 7.13-14):

- Կարո՞ղ եք ասել, որ անցել եք ՆԵՂ ԴՐՆՈՎ...:

-Մի բան է, որ մի ողջ կյանք չարչարվելով ու մաքառելով անցնում ես քո ճանապարհը և խաչդ չես թեթևացնում, մեկ այլ, երբ մի ողջ երիտասարդություն ապրում ես ու տարիքդ առած կանգնում անտեսանելի ու նեղ մի դռան առջ, որտեղ պարզվում է՝ ամենամեծ թշնամիդ անգործությունդ է, ու դու մենակ, ոչ անսպառ ծայրով անվերջ սպառում ես ճիշդ:

Մասնագիտական ճանապարհը հեշտերից չի եղել: Օգնում էին բարեհոգությունը, դիմացինին հասկանալը, թույլին թույլ ճանաչելը, ուժեղին անվերջ փնտրելը: Եվ այդ տարիներին, լինելով բաց մարդ, լինում էր, որ հայտնվում էի անհիմաստ ու երկարատև փակուղիների առաջ: Դեռ ազատում հասկացա, որ եղ փակուղիների շնորհիվ կայացավ արժեհամակարգ, որ հենց ինձ էր ու դարձավ լուռ պնդում թե՛ մասնագիտական, թե՛ մարդկային առումներով: Բայց մեզ պատուհասած զարգացումների ու դավադիր պարտությունների, աշխարհաքաղաքական խաղիկների արդյունքում մենք կորցրինք 35 տարվա կերտած ապագան՝ Արցախը: Եղ դարձավ ցավ, որը պիտի կուլ չտալ, բայց

բերանում էլ երկար չես պահի: Գիտակցելով, որ աշխարհաքաղաքական, ներհասարակական խաղերը մեզ տանում են դեպի հայրենական պատերազմ, արդեն 18 թվին էի պատրաստվում:

-Ճի՞շտ է, որ պարտությունները մեզ նախապատրաստում են հաղթանակների հետ հանդիպման...:

-Ես չորս որդիների հայր եմ, ու ինքս էլ պատրաստվում էի ու ընտրում եմ պարտադրված ազգային պարտության փոխարեն հայկական հայրենականը: Ու անգոր եմ, ձեռքերս կապած էին, երբ աչքիս առջ Արցախ էր ջնջվում, երեխա սպանվում: Առյուծի ձագն առյուծ է ի բնե, բայց այնք մեր երեխեքն են: Ես իրենց ծնողը չեմ կամ բուրդից չեմ, բայց իրենք ինձ որդու տեղ են գալիս, ու էդ դաժան կրիվը չպիտի ժառանգեին... Զիմա դա որպես կտակ արդեն թողնում ենք մի սերնդի վրա, որ ինձ թռան տեղ է գալիս: Գիշտ է, երկու որդիներս երեք և հինգ տարեկան են, բայց նրանք արդեն երկրորդ սերունդն են, ուն են կտակել եմ անվերջ պատերազմ: Եվ ես կետի վրա է, որ որպես մարդ գիտեմ, որ անպայման նեղ դուռ կա, ու դա հայրենական պատերազմն է: Ի դեպ, մենք հայահավաք կռիվ ունեցել ենք, ազգովի կռվել ենք, բայց դա ճակատամարտ է /էլի նեղ դուռ էր/, Սարդարապատը հայրենական պատերազմ չէր: Իսկ ամեն մի ազգ, որպեսզի քաղի իր տնկած ծառի պտուղը, պիտի ունենա իր հայրենական պատերազմը: Ինձ համար հիմա ծանր օրեր են: Անվերջամալի ներքին կռիվ կա ինքս իմ լուռության դեմ...

- Քանդակագործ Արթուր Գևորգյանը՝ ժամանակի քարտեզում, կամ ժամանակը նրա արվեստում ինչպե՞ս է արտահայտվում:

-Արթուր Գևորգյանն արդեն մոտ 30 տարի է, ուսումնասիրում է գեղանկարչական որմնաքանդակը: Անշտապ, առանց պատերի, իր համար: «Ժամանակակից արվեստ չկա» բղավողները մոռանում են, որ ամեն ժամանակ ունի իր ժամանակը, ու խեղճ Լեոնարդոն, որ Բոսխի տեսներ, հեշ չէր զարմանա, որ ինքը այդպես կամ ճչացող ճշմարտությունից

անտեղյակ է: Դալիին տեսներ, էլի չէր զարմանա, որ վերջինս մորուք չունի կամ նկարում է հավվող ժամացույց: Միքելանջելոյով էլ շատ չէր նեղվի, եթե տեսներ, որ եռաչափ ֆրեզոն իր տեղը քանդակ է անում, ու, մեկ է, ձեռքով կաներ անգամ հիմա: Ես ամեն ինչը շատ լավ մեկնաբանում եմ Դերման Դեսսեն «Նարցիսն ու Ոսկեբերանը» վեպում Բոսխի մոնետիզացնելով, մեկ էլ Անդրեյ Կոնչալովսկին «Մեղք» ֆիլմում, որտեղ պատմում է Միքելանջելոյի մասին որպես մարդու, որ ժամանակի մեջ է:

Ես հարցերս փակել եմ ժամանակի հետ, ու դիմացի 40 տարին քարերը հավաքելու ժամանակն է:

2008-ին համակարգում էի մի արտնախագիծ, որի վերնագիրը «Համի ու բույրի արվեստ» էր: Գյումրի «Ստիլ» պատկերասրահ: Ժամանակակից արվեստ ասածն արդեն վեր էր առել ձայնը, շարժումը, և զգայարաններից մնացել էին այդ երկուսը՝ համն ու բույրը, որ չէր արվել: Դա արել եմ հաշիվներս ժամանակի հետ փակելու համար, որից հետո պիտի սկսեի սովորել ապրելու արվեստը...

Շարք էի անում «44+4 առավոտ» վերնագրով էն էլ Արցախի կորստից հետո. դեռ մեջս չլռող պայթյունների կան, որոնք չեն հանդարտվում, որ խոսք դառնան: Ու էստեղ խզվածքն ուժեղացնում է Շիրակի մարզպետարանում կախված շարքի «Արցախ և լուռություն» կտորը, որտեղ հաղթած էինք ...

-Դիպվածը երբե՞ կարո՞ղ էր կանխորոշել Ձեր կյանքի ու ստեղծագործական արարումների ընթացքը: Ինչպե՞ս ընտրեցիք արվեստով ինքնաճանաչումը:

-Մեր տանը պապս պարաֆին էր պահում, ու գրքեր կային արվեստագետների մասին: Հայրս հարուստ գրադարան էր հավաքել, թեպետ և փոքրուց նկարում էի, ու չգիտեմ էլ՝ լավ էր թե վատ: Իսկ Մաշտոցի անվան դպրոցում մեր ուսուցիչը նկարչության դասարանը սարքել էր արվեստանոց: Ու մենք մտառում, նատյուրմորտ էինք նկարում:

- Ինչպիսի՞ն պետք է լինի մարդ-Աստված հարաբերությունը: Ե՞րբ են մարդիկ հեռանում Աստուծուց և ինչո՞ւ:

- Ինչքան նեղացել է դուռը, եղքան ավելի եմ զգացել Աստծուն: Ես հինգ տարի պատարագ եմ երգել, բայց նոտաները չեմ ճանաչում: Տեքստի

թրքոված մի քանի թուղթ ունեի ու բառերին նայելով՝ հիշում էի՝ ինչ պիտի երգի տեսնողը: Հետո կյանքը տարավ դեպի ապրելու արվեստ, բայց միշտ, մեծ գավաթը ձեռքիս, ասում էի՝ Աստված, մեր եղածը մեզ շատ մի՛ համարիր, ուրիշինը պետք չէ: Եղավ մի ընթացք, երբ ուղղակի ապրում էի:

100 գիրք էի տեսել արվեստից, մի էղքան կարդացել, մի էղքան նկարչի էլ անձամբ գիտեի արդեն, ու անձնական նեղ դրեքը, համացանցը քանել էին ասելիքս, ինչ-որ ստիխներ էի գրում (էստեղ լայն ու սրտանց ժպտալ է պետք...), փնտրում էի, թե ինչն է սխալ, ու աշխարհական կյանքը եկավ փոխելու կիսատ քրիստոնեային, բայց մտովի հետը հաշտ եմ եղել միշտ, անգամ անձնական կորուստների ժամանակ: Բայց Աստծո հետ վերջնական հաշտությունս ու ինքս ինձ չձաղկելը սկսվեցին 2020 թվի պատերազմից հետո: Հայկական՝ «տուն է, պետք կգա» ասածով լիքը բան կար, որոնք բալաստ էին: Ինչ պիտանի էր՝ նվիրեցինք: Կնոջս հետ որոշեցինք, որ եթե շորը տարվա մեջ գոնե երեք անգամ չենք հագնում, պիտի նվիրենք չունեցողին: Մինչև հիմա տանը լիքը բան կա, որ դրանից հետո առել ենք, ու մեզ պետք չէ: Մենք ազատվում ենք բալաստներից: 3-րդը իլյուզիաներն էին, որոնք մանկուց բալաստի պես ոտքերս կապել էին: 4-րդը՝ մարդիկ, որոնք նվեր ընդունել չգիտեին ու տեղը նվեր հետ դարձնելով՝ վճարում են:

-Ի՞նչ երազներ ու տեսիլներ են Ձեզ այցելում, և դրանք ինչպե՞ս են արտահայտվում Ձեր գործերում:

-Երազները հանգեր են, բայց կան ճակատագրական երազներ: Ես երազ հիմա քիչ եմ տեսնում, բայց տեսածս անպայման կատարվում է, դրանք արվեստ չեն գալիս. շնչառություն, խոսքի էներգիա են կամ շշուկ, բայց տեսիլների պակաս չկա, ու էլի արվեստ չեն գալիս: Մեկը՝ մի օր մտովի գնացի Արցախի հարավարևելքով. ճանապարհ էր, հետո գյուղ, բակ ու տուն: Զգիտեմ ինչու գնացի, մյուսը երևակայում եմ ու ընկնում տեսիլքի մեջ, փնտրում Պապենիքս /կորցրած հայրենիքիս՝ պապիս տանը, պապենիքս եմ ասում/: Եղ տանջանքը երբեմն արտասուքով է ավարտվում: Երրորդը՝ Արցախի դատարկ ճեղքակ չենքերն են, որոնք օրվա մեջ գոնե մի 4-5 անգամ աչքերիս առջ շողում են: Շնչառական տեսիլք կա, կոկորդս բռնում է միշտ, ու ընկնում եմ էդ օրը էդ տեղը: Ամենատարբեր, անավարտ, անզորությամբ ստեղծված ճակատագրական պահերն են արվեստի գաղափար, որ չեմ արել. մեկը չէ, բայց և ինչքան էլ որ

անեմ, խնդիրը սրտանց անելն է ու չտապելը. չիրականացված գաղափարն արվեստի մեջ չէ /էդտեղ կան անավարտ աշխատանքներ ու մտքեր/: Գաղափարը Հայկական լեռնաշխարհի մշակութային ժառանգության պաշտպանի միջազգային ինստիտուտն է, որը հիմա ընթացքի մեջ է ու դրա համար արժե ապրել երկար, Քանդակագործության ազգային պարկ-թանգարանի շարունակական կառուցումն է ու իմ խրամատներում լինելը:

- Այսօրվա իրականությունը փոխելու համար ո՞րն է ստեղծագործողի դերը:

- Ստեղծագործողի դերը չվախենալը, անկեղծ լինելն ու դադարելը ինչ-որ բան ակնկալել մի հասարակությունից, որ միշտ քո օգնության ու լայն սրտի կարիքն ունի:

- Ամենատպալորիչ հանդիպումը, անձը, գիրքը, նկարը, գործը ... և այսպես՝ ամենատպալորիչը:

-Տպավորիչը, անշուշտ, սերերն են, քանի որ գիրքը, մարդը, նկարն ու ամեն ինչը քո սիրո արգասիքն են, սիրելու արվեստը, հինգ երեխաներս, կանայք... / ժպտալով պիտի սա ասել ու բարի ժպիտով/: Ես շատ մեծամուգների եմ հանդիպել, պատիվ ունեցել ճանաչելու և ոչ միայն հայ, տեսել նկարներ, քանդակներ... Բայց ամենատպալորիչն ընկերոջս՝ Ղևոնդի հետ ամեն օր իր մոր գրածը լսելն էր, ու մի օր էլ ամենա-ամենամ՝ զատիկը, որ հագել էր խաչքարի նախշերը/բառացի չեմ մեջքերում/: Եղ որ կարդացի, մի քանի օր պապանձվել էի: Պատմությունը մեզ միշտ պատրաստում է մեր տողը գրելուն, ու մենք միշտ, եթե արդարամիտ ենք ու պատասխանատու, գրում ենք մեր տողը: Զիմա դա անում ենք նաև սոցցանցերում:

-Քանդակների խոստ՞ում են հետո կամ ունե՞ն հետադարձ ազդեցություն:

- Ավարտից հետո քանդակներս ինձ շարտում են հեռու ու շատ երկար ժամանակ վերադառնալ, տեսնել չեմ կարող, մինչև հետո հասկանամ իրենց: Ժպտում էի միշտ բուրդին, որոշ քանդակների կարոտում, բայց հետապետերազմյան քանդակներից մայել չեմ կարող: Անգամ «Քարե երգեհոն»-ին չեմ մայում, թեպետ կողքից եմ գնում-գալիս աշխատանքի:

-Երեք բառե հմայիլներ, որ կասեիք դժվար պահերին, և կուներնար «Սեզան, բացվիր»-ի նշանակություն:

-Ես չունեմ հմայիլ բառեր, ես հետ եմ մայում, ու բացվում է սեզանը: Ու սրտանց մայում եմ երկնքին, երբ ասում եմ՝ Տե՛ր Աստված, ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾԸ ՄԵՁ ՇԱՏ ՄԻ՝ ՀԱՄԱՐԻՐ. ՄԵՁ ՈՒՐԻՇԻՆԸ ՊԵՏՔ ԶԷ:



ԳԵՂԱՐՎԵՏՏԱԿԱՆ ՃԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԶՆՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՒԲԳԵՆ ԽԱՆՔՅԱՆԻ «ՀԱՍՏՎԱՐԱԿ» ՎԵՂՈՒՄ



Գուրգեն Խանքյանը ժամանակակից հայ գրականության նշանավոր անուններից մեկն է: Նրա բազմաթիվ ստեղծագործության մեջ իր ուրույն տեղն ունի գեղարվեստական արձակը: 2022 թ. «Անտառես» հրատարակչությունը լույս է ընծայել գրողի «Համավարակ» վեպը: Այն պայմանականորեն կարելի է ասել, որ համապատասխան սկզբունքով ստեղծված երկ է, որի գեղարվեստական ճանաչողության սկզբն ուղղորդված է հեղինակային հայացքի տակ վերցնելու նորանկախ Հայաստանի վերջին տասնամյակների կեցության տարբեր կողմերը: Այդպիսի մոտեցմամբ պայմանավորված վեպի գեղարվեստական համակարգում ժամանակակից հայ մարդկանց կերպարների միջոցով վերանայվում է վերջին տասնամյակների ազգային կյանքում տեղի ունեցող անցուղարձը: Այդ ամենը ներկայացվում է գլխավոր հերոսի՝ Երևանում ծնված-մեծացած, ճանաչված վիթրուլի որդի Հարութի /Հարություն/, ինչպես նաև իր ընկերների ու իրեն հանդիպած մարդկանց հետ անձնական շփումներով և դիտարկումներով: Հարութը անկախության տարիների նախօրեին հանգամանքների բերումով /անհատի համար խորհրդային իրականության սահմանափակ հնարավորությունների հետևանքով/ հեռացել էր հայրենիքից և հանգրվանել ԱՄՆ-ում: Հարագատների մահվանից հետո նա վերադառնում է Երևան, որ հայրական տունը վաճառի ու վերադառնա: Համաճարակի քովի 19-թաղավարակի տարածման հետևանքով ինքն էլ վարակվում է և, ինչպես բժիշկն է արտաստել, վեպում, իր ուժեղ գեների շնորհիվ հարգաբարձրում է հիվանդությունը: Նա առողջանում է, սակայն երկրից դուրս գալու ճանապարհներ

ընկալվում են, և չի կարողանում վերադառնալ: Որոշում է շրջագայել հայրենիքում, լինել տեսարժան վայրերում:

Տեսականորեն հայտնի է, որ վեպի ժանրը ճկուն է և հաճախ հարմարվում է հեղինակի մտահղացմանը, նրա կողմից առաջարկված հնարքներին: Վերոհիշյալ հանգամանքը նկատի ունենալով կարելի է նշել, որ «Համավարակում» Գ.Խանքյանը ձգտել է իրադարձությունները վեպի համապատասխան ներկայացնել գեղարվեստական հստակ կառուցի, գլխավոր կերպարի հայրենիքում մարդկանց հետ նրա ունեցած համոզիչ շփումների և առնչությունների միջոցով: Հեղինակը կիրառել է կյանքն արտացոլելու տարբեր եղանակներ, այդ թվում՝ ռեալիզմի և ռոմանտիզմի գրական ավանդույթները, մոգական ռեալիզմի որոշ հնարքները, իր հերոսի գոյաբանական /էկզիստենցիալ/ ընկալումներն ու ընթանումները: Մոգական ռեալիզմի հետ եղած առնչությունների կապակցությամբ պետք է ասել, որ մտապատրանքների /հայտնի անհայտների/ ձևով հայրական տան մեջ իր մահացած հարագատների հոգիների հետ է «հարողակցվում»: Տան պատերի միջից ելնող հարագատների «ոգիները» դաժան ու անողորմ ճշմարտություններ են բարձրաձայնում, մեղադրում նրան, որ երկրում անկախության առաջին տարիներին ստեղծված ծանր կացության պատճառով հեռացավ, պարզապես փախավ ԱՄՆ: Հարութը փորձում է արդարացնել իրեն, երկրից հեռանալը, սակայն նրա հակադարձումը համոզիչ չի հնչում հարագատների համար: Բայց ահա վեպի վերջին դրվագում նա փոխում է իր մտադրությունը և որոշում չվաճառել այն:

Առաջին հայացքից անհավանական թվացող նման ավարտին հասնելու համար հեղինակը իրեն համեմատաբար բարդ, արդիական, հայ մարդու անհատական-բարոյահոգեբանական, գաղափարական ու գեղագիտական, գեղարվեստական խնդիրներ լուծելու առաջ է կանգնեցրել: Մեր օրերում շատերիս է հայտնի, որ Հայաստանից, մանավանդ վերջին տասնամյակների ընթացքում, արտագաղթը բավականին մեծ թափ ստացավ, և երկրից հեռացողների քանակը շատացավ

կտրուկ կերպով: Կերպարի հոգեբանական բարդությունը այն էր, որ հեղինակը պետք է վեպի գեղարվեստական տիրույթում կարողանար համոզիչ դարձնել ընթերցողին Հարութի արարքը: Կ՛հ որ այնքան էլ հաճախ ականատես ու վկա չենք լինում նման դեպքերի: Գրականության մեջ գեղարվեստորեն կերտվում են ոչ միայն տիպական բնավորություններ, այլև անհատական հատկանիշներով առանձնացող կերպարներ, որոնց մեջ հեղինակը տեսնում է իրեն հետաքրքրող հասարակական, ազգային, բարոյահոգեբանական ու ինքնատիպ մարդկային որակներ ունեցող անհատների: «Համավարակ» վեպում Հարութը այդպիսի գեղարվեստական ու մարդկային դերակատարությամբ է հանդես գալիս:

Այս տեսանկյունից հայրական տունը չվաճառելու վճիռ կայացնելու գործում հեղինակը հերոսի մեջ նախ թերևս կարևոր էլ է ներքին, հոգևոր /գիտակցված կամ իր մեջ բնագործն ապրող/ կապը մահացած հարագատների հետ: Սրան անհրաժեշտ է անդրադառնալ, քանի որ այն կարևոր է հերոսի ներաշխարհում դրսևորված գործարար ամերիկացիներին, պրագմատիկ մարդկանց հատուկ հոգեբանության տիրույթում տեղաշարժերը բացահայտելու համար: Ինչ խոսք, մանկության ու պատանեկության շրջանում հարագատների, ուսանողական ընկերների հետ նախկինում ունեցած ջերմ շփումների շնորհիվ Հարութի մեջ ձևավորված ներքին բարոյահոգեբանական հիմքը իր հերթին նպաստում է տունը չվաճառելու որոշում կայացնելուն: Այս առումով ուշագրավ է առաջին իսկ գիշերը իր հարագատների ոգիների հետ զրուցելու գեղարվեստական հնարքի ընթացքում հերոսի հետևյալ ինքնավերլուծության հիման վրա կատարած իրատեսական հետևությունը: Չստ էության նա հաստատում է, որ իր հետ խոսող հարագատների հոգիները ոչ թե պատի միջից են դուրս գալիս, այլ նրանք ապրում են իր մեջ: Իրականում վերադառնալով մանկությունից հարագատ քաղաքը, ընկերների ու ողջ մնացած հարագատների միջավայրը՝ նա որոշակի ճշգրտումներ է կատարում իր հոգեաշխարհում:

Մեր կարծիքով, այստեղ՝ նրա ներաշխարհում, գործել է նաև

տան, հարագատների արքե-տիպային պատկերացումների ակտիվամալու գործոնը, որը հեղինակը գեղարվեստորեն ներկայացնում է մոգական ռեալիզմի որոշ սկզբունքների կիրառմամբ: Հետևաբար հարակավոր է պարզել, թե ինչպիսի հանգամանքներում դա կարող էր տեղի ունենալ: Կարծում ենք՝ Գ.Խանքյանը իր առջև դրած բարդ գաղափարագեղարվեստական խնդիրը փորձել է լուծել վեպի դիպաշարի տիրույթում: Հարութին նա բերում է ԱՄՆ-ից համոզիչ թվացող նախադրյալներ վկայակոչելով: Հայրական տունը ծախսելու ցանկությունը և իրատեսական է ներկայացված: Նախկին ծանոթներին, թաղի ու համակուրսեցի ընկերներին հանդիպելու, ազգային կյանքի ու կենցաղի մեջ նորից հայտնվելու, երևանում ու Հայաստանի տարբեր շրջաններում շրջագայելու, համաճարակի պատճառով վարակվելու և այն հաղթահարելու հանգամանքները աստիճանաբար նրա մեջ հայրենիքի հանդեպ որոշակի հոգեբանական վերափոխումներ են առաջ բերում: Առողջանալուց հետո ցանկություն է առաջ գալիս շրջագայել հայրենի երկրի տարբեր մարզերում, ուր մինչ այդ երևանում ապրելիս չէր եղել: Գալով Գյումրի՝ այստեղ գյումրիական ինքնատիպ ուստես է ճաշակում /«քալլա»/, Արագածի լանջերին ապրող եզդիների մոտ խաչ է վախելու: Հերոսն առնչվում է նաև մեր իրականության արատավոր կողմերին: Առանց կաշառք տալու գրասենյակային աշխատակցուհուն հնարավոր չի լինում տունը արագ կերպով իր անունով սեփականաշնորհել, որ կարողանար այն վաճառքի հանել և այլն:

Առայտ, կենցաղային օբյեկտիվ ու սուբյեկտիվ ընկալումների ու զանազան քննարկումների արդյունքում են նաև իր ընկերներն իրենց դժգոհությունն արտահայտում նորոյա իշխանության, վարչապետի չբավարարող գործունեության, հեղափոխությունից ունեցած սպասելիքները չարդարացնելու պատճառով: Հեղինակն այս դրվագում օգտագործել է նաև Արագած անվան առաջացման մասին քիչ հայտնի մի ավանդույթ, որի համաձայն մեր չքնաղ լեռան անունն առաջացել է Արայի և Շամիրամի մասին պատմվող առաս-

պելից: Երբ Ասորեստանից իբրև թե Արան հեռացել է, նրան սիրահարված Շամիրամը, նրա հետևից վազելով, գոչել է Արա, կաց, այստեղից էլ առաջացել է Արագած լեռան անունը: Հայրենիքի հետ փոխկապվածությունն ավելի է ամրապնդում 2020 թվականի սեպտեմբերին սկսված Արցախյան չարագոյություններից հետո ստացած տպավորությունների ազդեցության տակ իրեն զգում էր հայրենիքի որոշակի մասնիկը: Ռմբակոծությունների տակ ընկնելով, կորցնելով ընկերներից մեկին՝ նա վիրավոր վիճակում կարողանում է փրկել ծանր վերք ստացած երիտասարդ զինվոր Նարեկի կյանքը: Հարութին պատմելով իր մասին՝ տղան ասում է. «Խեղճ հերս, ուրիշ տղա չունի, ես եմ, ես ու երկու քույրերս, բայց իրանք ամուսնացած են: Ռուսաստանում են իրանց ընտանիքներով, ասում էին՝ արի մեր մոտ, էստեղ անվտանգ ա, բայց ես զնամ, էն մյուսը գնա, բա երկի՞րը, հո՞ղը, բա հերս ու մե՞րս, բա մեր տունը...»: Եվ այս ամենից հետո է, որ Հարութը հրաժարվում է իր տունը վաճառելու մտքից: Բայց և այնպես, վեպում պատերազմն իր պատճառներով ու ընդգրկումներով, ցավոք, ամբողջության մեջ տեսանելի չի դարձել:

Գ.Խանքյանը արձակի ժամերով ստեղծագործելու մեծ ու հաջողված փորձ ունի, որը կիրառում է նաև այստեղ, օգտագործում է ազգային-հասարակական խնդիրները բարձրաձայնելու հանդեպ իր հրապարակախոսական ջիղը: Վեպում, փաստորեն, արտահայտվել է նաև արդի հանրության մեջ ազգայինից դեպի համաշխարհայնացում հեռանալու միտումը, ինչպես նաև դեպի ազգայինը վերադարձի մղումը, ինչը հայ մարդու ներաշխարհում ևս դրսևորվում է իր տարբեր նրբերանգներով:

Գագիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Բան. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

«ԵԿՎՈՐԸ» գեղարվեստական ակնարկի հեղինակը դարաքիլիսեցի, պահեստի գնդապետ ԿՈՐՅՈՒՆ (Կոծիկ) ԲԵՆԻՍԻՍԻՆԻՆՆԱՆ է: Նա ավարտել է Կիրովականի թիվ 4 դպրոցը, ապրել և աշխատել է Կիևում: Ակնարկում խոսվում է 1934 թ.-ին Ղարաբաղի սայում Չարենցի և Ստ. Չորյանի մի հանդիպման մասին: Որքանով է ավածը հավաստի, եղել է Չարենցն իսկապես Ղարաբաղի սայում-Կիրովական-Վանաձորում, եղել է Չարենցի ու Չորյանի հանդիպումն այդտեղ՝ չենք կարող ասել: Եվ եթե անգամ ամեն ինչ ակնարկագրի երևակայության արգասիքն է, այդուհանդերձ գրվածը բավականին պատկերավոր է և հետաքրքիր:

Ակնարկը գրվել է ռուսերեն: Վաստակավոր լրագրող, Կիրովականի քաղաքային «Կայծ»

թերթի երկարամյա փորձառու խմբագիր Արծրուն Վաղինակի Սարգսյանը տարիներ առաջ ռուսերեն բնագիրն ինձ տվեց խնդրելով թարգմանել հայերեն: Կատարեցի նրա խնդրանքը: Թարգմանությունը տպագրվեց հնաբնակների «Ջուխտ Ախպուր» թերթում: Հետագայում տպագրվեց նաև Հայաստանի գրողների միության Լոռու բաժանմունքի «Երկունք» պարբերաթերթի 2007 թ. մարտի համարում:

Թարգմանելիս աշխատել եմ բնագիրը հայերեն վերարտադրել համապատասխան ռժով գործածելով Լոռու խոսվածքը, ծերունիների խոսքում ժողովրդական բառաբանը (երբեմն գրական հայերենի փոխարեն օտար կամ բարբառային բառեր գործածելով), Չարենցին հատուկ լեզվաոճական առանձնահատկությունը:

Ցավոք, ռուսերեն բնագիրը կորցրել եմ, իսկ Արծրուն Սարգսյանն ու ակնարկի հեղինակն արդեն վաղուց կնքել են իրենց մահկանացուն, և հնարավոր չէ բնագիրը ձեռք բերել:

Բոլոր դեպքերում, կարծում եմ, ներկայացվող հրապարակումը հետաքրքիր կլինի:

ԿՈՐՅՈՒՆ ՆԱՎՈՅԱՆ
ԵԿՎՈՐԸ

Այդ տարի մենք Մոսկվայից վերադարձանք Ղարաբաղի: Քաղաքն ուներ մեկ շուկա, հինգ աղբյուր, փուռ, թիթեղագործի արհեստանոց, դաբախանա-սպանդանոց և քսան հազարի չափ բնակչություն: Քաղաքի մի կողմում, Փաշիգյուղ կիրճի մոտ, սկսել էր

ծխարձակել առաջին հնգամյակի զավակը՝ քիմգործարանը:

Մշակութային կենտրոնը, եթե կարելի է այդպես անվանել, շուկան էր, որին տեղի բնակիչները «մեյդան» էին անում: Տոն օրերին այստեղ ներկայացումներ էին տեղի ունենում, ըմբիշների, փախկանների ելույթներ:

Շուկայի կողքին տեղավորված էին խաչի, լավաչի, չղաբաղած կաշեփուկերի, լծասարքի, կոշիկակարների, սափրիչների, դրվագողների տաղավարները, խանութ-կրպակները: Իսկ դրանց դիմաց աչքի էր ընկնում առաջին վայելուչ շենքերից մեկը՝ շրջանային դեղատունը: Դեղատան լայն լուսամուտ-ցուցափեղկի ներսում փթթում էր քաղաքի միակ արմավենին: Երթևեկության հիմնական միջոցը ծիակառքերն էին, իսկ սլացիկ սև հովատակը,

որ լծված էր փափուկ, հարմարավետ ֆայտոնին, շրջակայքի հպարտությունն էր և քջերին էր մատչելի: Նրա տերը՝ ֆայտոնչի Չուկոյենց Լևոնը, միջին տարիքի համակրելի, թխադեմ մի տղամարդ, զանգուր մազերը թեթև եղանակով արծաթված, հպարտ ու արժանապատիվ նստում էր նստիքին՝ գիտակցելով իր և իր ծիու արժեքը:

... Վանանց ձորի կիրճի կողմից սլացող կառքն անցավ քաղաքի կենտրոնական աղբյուրն ու կանգ առավ դեղատան մոտ՝ ծերունիների սիրած հավաքավայրում: Կառքից երկու մարդ իջան: Մեկին ես իսկույն ճանաչեցի. տեղացի գրող Ստեփան Չորյանն էր: Նա իմ պապի դպրոցի ընկերն էր և մեկ տարի առաջ Մոսկվայում մեզ հյուր էր եկել: Մյուսը եկվոր էր, միջախասակ, միհար ու չորուկ, ան-



Համաշխարհային պոեզիայի ակադեմիայի պոեզիայի Պոլ Եյուարի պոեզիան անընդհատ նորոգվող բնույթ ունի: Արտասովոր պատկերները, խոսքակառուցման անհնարին ձևերը իրողություն են դառնում: Բանաստեղծը խոսում է մարդու և մարդկության դիտանկյունից, խորհում աշխարհի լինելության փիլիսոփայության շուրջ: Բարդ ու դժվարին բնագիրը հաղթահարել է թարգմանիչն ու հավաստարիմ մնացել բնագրին, ընթերցողին հնարավորություն տալով լավ ճանաչելու Եյուարի հակասական գեղարվեստական աշխարհը:

ԷԼՅՈՒԱՐԻ ՇՈՒԹԵՐԻՑ ԱՐԱՎՆԻՆԵՐ ԵՆ ԹՈՂՈՒՄ

27 տարեկան էի, արագընթաց գնացքով գնում էի Փարիզ, լսելով Ազնավուրի «Մեռնել հանուն սիրո» երգը, իմ ճանապարհորդության մթնշաղիմ իմացա Գաբրիել Ռուսիեի ողբերգական պատմությունը և արձագանքը. Ելիսեյան պալատում նորընտիր նախագահ ժողով Պոմպիդուի, որ մեջբերում է մի հատված Պոլ Եյուարի հասարակական կարծիքը տապալող բանաստեղծությունից, որը գրվել էր 1944 թվականին՝ ի պաշտպանության

նություն սափրված գլուխներով կանանց:

Լինելով դիմադրության շարժման խորհրդանշական կերպար և գրելով այս բանաստեղծությունը, նա լինելով մտքի մի հոսանքի մաս Պոլ Եյուարը հակասում է ընդհանուր հասարակական զգացողությանը: Նվաստացմանը բանաստեղծի հետ միայն Սարտրը և որոշ մտավորականներ ընդդիմացան:

Ազատագրման ժամանակ մարդիկ տարիներ շարունակ պարզապես ապրել էին դաժանություններ և անողորմ աչք էին գցում նրանց վրա, ովքեր համարվում էին մեղավորներ: Միայն հետախայաց նայելով և ժամանակի ընթացքում ընծանված հանգստությամբ է, որ հասարակությունը այս կանանց նկատմամբ ավելի ներողամիտ կգտնվի կամ կհամարի որպես միամիտ սիրահարներ, կամ պատերազմի պարզ զոհեր:

Բանաստեղծն ազատագրմամբ ոգեշնչված անարդարության և անզորության ճիրաններում գտնվող կանանց հալածանքներից իր ստեղծագործությունը պետք է ընդգծեր այս նախադասությամբ:

«Այն ժամանակ, որպեսզի չպատժեն մեղավորներին, դաժանության արժանացրին աղջիկներին: Սափրեցին մինչև իսկ նրանց գլուխները»:

Պատմության մի տխուր էջ... Պոլ Եյուարը, ում իսկական անունն է Էժեն Էմիլ Պոլ Գրինդել (դեկտեմբերի 14, 1895, Սեն Դենի-Նոյեմբերի 18, 1952, Շարենտոն-լե-Պոն), ֆրանսիացի բանաստեղծ է, սկզբում դադաիստական շարժման, այնուհետև սյուրռեալիզմի դեպքում: Ձախակողմյան քաղաքականության հետևորդ, նրա քաղաքական հակումները գնում են դեպի կոմունիզմ:

Եյուարն իր համբավով պարտական է իր տաղանդին, որպես

ռոմանտիկ բանաստեղծ, քանի որ իր կյանքում ուներ մի քանի մուսաներ, որոնք բոլորն էլ խորապես ոգեշնչել են նրա պոեզիան: Ես միայն կնշեմ նրանցից ամենախարիզմատիկին՝ Գալային, որն ի վերջո թողեց Եյուարին միանալով սյուրռեալիստ նկարիչ Դալին: Բայց Եյուարը նաև ռազմատենչ բանաստեղծ էր, և ամենից առաջ նրա անհատականության այս կողմն էր, որ գրավեց իր ժամանակակիցներից:

Եյուարն իր ողջ կյանքի ընթացքում պաշտպանել է պացիֆիստական արժեքները: Իսկապես, նա շատ է ճանաչվել իր երիտասարդության տարիներին, երբ 1914թ.-ի ճակատում որպես բուժակ ներգրավվել է և այդպիսով զորավարություններ կատարել զինվորական հոսպիտալում: Սերտորեն շփվում է պատերազմի սարսափների, ատելության, մարդու մութ կողմերի հետ և սրտում պահպանում է ոգին ապստամբության, որն իրեն առաջնորդում է դեպի գաղափարական միլիտանտություն երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Եյուարի անունը կապված է նախատեսների ներխուժման դեմ պայքարի հետ:

1944 թվականի ազատագրման ընթացքում Պոլ Եյուարը գրել է. «Ով ցանկանա կհասկանա» ստեղծագործությունը, որը գաղտնի տպագրվել է «Գերմանական հանդիպմանը» բանաստեղծությունների ժողովածուում:

Նա նորից կգրեր. «(...) Ես նորից տեսնում եմ Գրենել փողոցում գտնվող վարսավիրանոցի առջև՝ մայքին ընկած կանացի հոյակապ վարսեր: Ամբոխի ծիծաղի տակ տեսնում եմ ողբալի անօգնականների, որոնք վախից դողում են: Նրանք չէին վաճառել Ֆրանսիան և շատ հաճախ ընդհանրապես ոչինչ չէին վաճառել: (...):»

Երկու համաշխարհային պատերազմների ականատես Եյուարն ընդգծեց ֆրանսիացի ժողովրդի արժեքը և ազատության

կարևորությունը: Բացի այդ, նա Սալվադոր Դալիի, Անդրե Բրետոնի և Լուի Արագոնի հետ եղել է սյուրռեալիստական շարժման մի մասը, Պիկասոյի, Մաքս Էռնստի և Ման Ռեյի ընկերը: Նրա պոեզիան շատ է հուզել աշխարհին՝ իր ազնվությամբ ու պարզությամբ...

Հանգերի բացակայությունը (ազատ չափածո գրելը), ինչպես նաև կետադրական նշանների բացակայությունն ինձ ստիպում են երազել իմաստի վարկածներ ստեղծելու մասին:

Պոլ Եյուարի պոեզիան առաջին հերթին ցանկության լուսավոր վեհացում է: «Ցավի մայրաքաղաքը» (1926) ցույց է տալիս, որ հիվանդության, մեղադրության և մահվան աշխարհը միշտ սպառնալիք է ներկայացնում, բայց սա է նաև այն, ինչը իր գինն է տալիս երջանկությանը: Վերնագիրն ի սկզբանե անվանում է «Դժբախտ լինելու արվեստը»:

Սեր պոեզիայի «եսասիրական» սերը կարող է նաև բացվել և աշխատել բոլորի երջանկության համար, ինչի մասին վկայում են La Vie Immediate (1932) և Les Yeux Fertiles (1936) ժողովածուների բանաստեղծությունները՝ նշելով նրա ընդհանուր սերը Նուշի հետ: Նուշի մահը ապագայի վրա խենթ խաղաղության համար, ինչի մասին վկայում են «Պոլ Եյուար կամ կյանքի հավատարմություն» գրքում: Նա դա անդադար խորացնում է՝ ամենամարմնային ցանկությունից մինչև էրոտիզմ և մինչև այդ սերը դեպի աշխարհի սերը: «Ես»-ից «դու»

գնալը նշանակում է գնալ «մեզ», դեպի ավելի մեծ «մենք»: Սերը ներքին անհրաժեշտությամբ, թույլ է տալիս տեսնել, թույլ է տալիս ապրել, թույլ է տալիս ցանկանալ մի աշխարհի առանց խեղճան, որը ծաղկելու է մարդկային բոլոր արժեքները ներդնելով: Միակ ընդհանուր պահանջն է՝ Պոլ Եյուարը գրում է. «Աշխարհի ստեղծելու համար ամեն ինչ պետք է: Դա երջանկություն է պահանջում և ոչ այլ ինչ»:

Ահա թե ինչու են նախընտրեցի թարգմանել, հայ ընթերցողին հասանելի դարձնել բանաստեղծությունների այս ժողովածուն, որը սկսվում է «Ով ցանկանա կհասկանա» և ավարտվում Ֆրանսիայի ազատության համար զոհված օտարերկրացիներին նվիրված բանաստեղծություններով...

«Դա միայն այն օտարականներն էին, ինչպես մենք դեռ նրանց անվանում ենք

Որոնք հավատում էին արդարությանն այստեղ ներքևում և հաստատ

Իրենց արյան մեջ ունեին իրենց ընկերների արյունը Եվ այս օտարականները գիտեին, թե որն է իրենց հայրենիքը»:

Վերջապես, որտեղ էվրոպան շղթայված էր, Եյուարը գրեց.

«Եվ մեկ բառի կարողությամբ Վերսկսում են կյանքս նորից Ծնվել են որ քեզ ճանաչեն Թեզ անվանեմ Ազատություն»:


Այս բառը ներառում է աշխարհի բոլոր ապրումները, ըստ իս, այն գլխավոր իրողությունը, որի պատճառով ես սիրում եմ Ֆրանսիան...

Կարեն ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ բանաստեղծ



Նոր գրքեր

Էջը կազմեց Լիանա ՎԱՐԴԱՆՅԱՆԸ



ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ: Ափինյանական ընթերցումներ. ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողով 12-13 նոյեմբեր, 2022, Գյումրի.-եր.:


Ժողովածուն ընդգրկում է 2022թ. նոյեմբերի 12-13-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին ներկայացված գիտական զեկուցումների հոդվածները՝ նվիրված հայագիտության տարբեր ոլորտների արդի հիմնախնդիրներին: Նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:



«Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)»: Միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր: 2023, Գյումրի: Հոդվածների ժողովածու: Գյումրի: ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն:

Ժողովածուն ընդգրկում է 2023թ. սեպտեմբերի 23-24-ին Գյումրիում Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ) խորագրով միջազգային երկրորդ գիտաժողովին ներկայացված զեկուցումները գիտական հոդվածների տեսքով: Դրանք վերաբերում են Հյուսիսային Հայաստանի

պատմության, հնագիտության, ազգագրության, ճարտարապետության և արվեստի տարբեր կնճռու հիմնահարցերին: Ժողովածուն նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:



Բավեյան Կարինե, 1918-1921 թթ. իրողությունները շիրակցիների բանավոր հիշողության մեջ. Նյութերի ժողովածու - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2023: Ժողովածուն ընդգրկում է Ալեքսանդրապոլի գավառի 1918-1921 թթ. իրողությունների ու դրանց սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքների մասին Շիրակի մարզի 40-ից ավել բնակավայրերի շուրջ 60 բանա-

ացներից հավաքած հիշողություններն ու բանավոր պատմությունները, որոնք համադրվել են մասնագիտական գրականության և արխիվային նյութերին: Վերոհիշյալ նյութերի հիմամբ կազմվել է թուրքական արշավանքների հետևանքները ներկայացնող քարտեզ: Այն նախատեսված է պատմաբանների, ցեղասպանագետների, բուհերի հումանիտար ֆակուլտետների դասախոսների, ուսանողների և այս ոլորտով հետաքրքրվող անձանց համար:



2023 թ. նոյեմբերին լույս է տեսել «Մերունդների երկիտություն» խորագրով միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուն, որը հրատարակության է

երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԿԳՄ Պատմության կոմիտեի ֆինանսավորմամբ 22YR-6B030 «Շիրակի մանկական բանահյուսությունը» գիտական թեմայի շրջանակներում (թեմայի գիտական ղեկավար՝ Բ.Գ.Ք. Հասմիկ Մատիկյան):

Ժողովածուում տեղ են գտել 2023թ. օգոստոսի 25-26-ը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում անցկացված «Մերունդների երկիտություն» երիտասարդական միջազգային գիտաժողովին ներկայացված զեկուցումները գիտական հոդվածների տեսքով: Դրանք վերաբերում են մանկական բանահյուսության, ազգագրության, երաժշտագիտության, հեքիաթագիտության տարաբնույթ հարցերին:

Ժողովածուն ընդգրկում է տեղի և արտերկրի /ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ռուսիան, Հնդկաստան, Վրաստան/ երիտասարդ և ավագ հետազոտողների գիտական հոդվածները և նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ԱՐԵՎԱՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



ՅԱԿՈՐ ՏԼՏԼԵԱՆ Երեւան ԱՆԴԱՂԱՐՈՒԹԻՒՆ

Դադարտ մը վերջ թնդանօքներն Ու հրետանիներ Դարձեալ կը լեցուն են կրակելու Կարճ ու կտրուկ Յրահանգի մը Անոնք կը սպասեն... Դադարտ մը վերջ Այդ միջազգային Կաս-կարմիր խաչի Աշխատակիցներ Իրենց սեփական Դրօշակները Աջ-ձախ կը ճօճեն Աճիւն կ'որոնեն Եւ բանտախուցէ Ուրիշ բանտախուց Անոնք կ'այցելեն Եւ փաստահաւաք Գործ կը կատարեն: Իսկ այդ սուրբ գործի Մեծ արդիւնքները Այդքան կ'ուշանան... Եւ յաճախ անոնք Մոռացութեան խոր Անդունդներու մէջ Լուռ կը կորսուին: Դադարտ մը վերջ հունտեր կը պայթին. Փարաշուտները, Դատարկութեան մէջ Շուշաններու պէս Գոյն-գոյն կը բացուին: Դադարտ մը վերջ Երկունքի ցաւեր Ուժեղ կծկումներ Կը վերադառնան Արգանդներու եւ Ուղեղներու մէջ Մինչեւ ծնունդ տան Նոր պտուղի մը: Դադարտ մը վերջ Մեծ երկրաշարժին Պիտի յաջորդեն Յետ ցնցումային Փոքրիկ ալիքներ, Մինչեւ յարմարինք Իրականութեան Նոր պատկերներուն: Դադարտ մը ետք Մարդիկ կ'ընկալեն Ինչպէս խաբուած են Կեղծ խոստումներով Կեղծ արեւներով... Եւ թմրեցուած են Նուաճումներու Կեղծ ալիքներով, Վիճակագրական Կեղծ շարժումներու Կորագիծերով Եւ տուեալներով:

Դադարտ մը վերջ Մենք կը մահանանք... Դադարտ մը վերջ Երկնային այդ մեծ Դատարաններէն Վճիռ կ'արձակուի Եւ մենք վերջապէս Կը տեղափոխուինք Անդարարութեան Մեծ կայսրութեան Մեծ անյայտութիւն...

22.09.2021 Բ. Դալէպ



ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆ Նիկոսիա, Կիպրոս

ՕՐԵՐՈՒՄ ՄԵՋ

Օրերուս մէջ, կեանքն էր կարծես սայթաքեր իր բնական հունէն, Հոսանքին մէջ իր գետակին ջրմուռներով նեխահոտեր...

Օրերուս մէջ ես փնտռեցի շո՛ղ մը պայծառ արեգակեան, Որ ան ծորեր ու փարատեր միգամածը համատարած...

Օրերուս մէջ մարդը՝ միթով լոկ յղփացած, դեռ կը փնտռէր Կայծ մը հրեղէն, որ ան գուցէ կրակ ու հուր փայլատակէր...

Օրերուս մէջ, սերն էր նոյնիսկ այլասերած, այլանդակուած, Դարձեր միայն շահի, սեռի սին վայելքին ստրկացած...

Օրերուս մէջ, մարդը անգամ դարձեր էր շուկայի ապրանք, Վաճառելի արծաթ դրամով կամ ապրանքով փոխանակուած...

Օրերուս մէջ, քառս մըն էր աղմկարար ուր մարդն ազատ Ինչպէ՞ս ճախրէր անթել, անթռիչք ու գետնամած...

Օրերուս մէջ, բառն ու բանը անհոգի միւթ էր լոկ դարձած, Աղօթքի տեղ Աստուածառաք, զիլ հնչիւն մը տխուր հեւար...

Օրերուս մէջ, բանաստեղծը կ'ապաւինէր իր լուսութեան, Ու միայն հոն, ան կը գտնէր հոգին մենակ ու տխրամած...

Ու լռութեան այդ խորանին, կ'արարէր երգ սիրտէն բխած, Որպէս աղօթք անեղծ, անկեղծ, որպէս սիրոյ խոստովանանք:

18.3.2023



ՅԱՐՈՒԹ ՎԱՐԳԱՆԵԱՆ Դալէպ

ՃԵՐՄԱԿ

Հարսի հագո՞ւստ, թէ՞ ամպ, Մեռելի պատա՞նք, թէ՞ շերամ. Ինչ որ ճերմակ, ճերմակ հագուի, Օր մը պիտի հանուի:

Հարսը հատուն ամպի պէս Վրան միօրեայ գգեստ. Փարաւուննէ՛ր դարձան դիեր, Նորեկը՝ միօրեայ թիթեռ:

Ըլլայ պատանք, ըլլայ բոժոժ*, Ե՛ւ դրախտ է ե՛ւ դժոխք: Երբ որ ճերմակ, ճերմակ հագուի, Ամէն ինչ կը սրբուի:

Հարսի հագո՞ւստ, թէ՞ ամպ, Թէ՞ պատանք, թէ՞ շերամ...

14.09.2022

*Չերամի պատեան (cocoon), չերամը՝ մետաքսէ թել հիւսող որդ է (silkworm) որ կը վերածուի թիթեռի:



ՌՈՒՔԷՆ ՆԱԺՄԿ 2022, Երեւան

ԿԱՊՈՅՏ ՈՒ ԴԵՂԻՆ

Կապոյտ ու դեղին, կապոյտ ու դեղին, աշխարհը դարձած է կապոյտ ու դեղին: հեռատեսիլը կը բանամ կապոյտ ու դեղին: համակարգիչիս մէջ՝ կապոյտ ու դեղին: թերթերը ներկուած կապոյտ ու դեղին: կուրծքի ժապաւեններ՝ կապոյտ ու դեղին: աշխարհը դարձած է կապոյտ ու դեղին:

*** Ինչո՞ւ չներկուեցաւ աշխարհը գոյներովս երեք: աւելի քի՞չ սիրուն են ինձի վիճակուած երանգները: աւելի քիչ ներդաշնա՞կ են արդեօք. թէ ազգակից մանուկներն իմ շատ թուխ են, աչքերը շատ մուք են, ծեր բոլորին համար: երանի ըլլային կապուտաչեայ, դեղնորակ,

աշխարհին համար ընդունելի կապոյտ ու դեղին:

*** Կապոյտ ու դեղին, կապոյտ ու դեղին, աշխարհը դարձած է կապոյտ ու դեղին: հեռատեսիլը կը բանամ. կապոյտ ու դեղին: համակարգիչիս մէջ՝ կապոյտ ու դեղին: թերթերը ներկուած կապոյտ ու դեղին: կուրծքի ժապաւեններ՝ կապոյտ ու դեղին:

աշխարհը չի փոխուիր կապոյտ ու դեղին:



ՍԱՐԳԻՍ ՔԷԼ ՆԱՉԵՐՅԱՆ Պէյրուօ

ԱՅԳ ՕՐԵՐՈՒՆ

մեր յոյսը շատ մեծ էր ընկեր անվաղիս այդ օրերուն մեր ժպիտը լայն էր ընկեր ցեղ ու սեղմ այդ օրերուն մեր սպասուը երկար էր ընկեր մեր փնտռուքը ի գուր չէր ընկեր անունն իսկ չպահող այդ օրերուն մեր լռութիւնը պաշար էր ընկեր անայբուբեն այդ օրերուն մեր կեանքը պայքար մեր պայքարը կեանք էր ընկեր հողեն գլուխն այդ օրերուն



ՍԵՒՄՆ ՀՄՆԷՇԵԱՆ ՊԵՏՈՒՐԵԱՆ ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

ԱՐՑԱԽ

Արծուաբոյն իմ երկիր, Սրտիս տրոփիւնը Լեռներուդ մէջ կ'արծագանքէ: Որպէս արծիւ թեւերս լայն կը ճախրէի Սիրտս լեռներուդ մէջ, Հուժկու բազուկներուդ վրայ կը թափառէի...

Հայեացքս ընդարձակ Քաջերուս հերոսութիւնը կ'ըմբռնէի, Մինչ դարերէն եկած դողանքը կը հնչէր: Չորրորդ դարէն իսկ Ամարասը Այբուբենով կը սներ, Ղազանչեցոցը իր արիութեամբ իսկ շարական կերգէր, Գանձասարը աղօթքի ուժը կը տարածէր համայն երկրիս, Վանքասարը կը հսկէր մեր արիւնով ազատագրուած հողերը Եւ Դադիվանքը կ'օրհներ մեր սերունդները:

Արծուաբոյն իմ երկիր, Արտասուքս արդէն արիւնին միացաւ: Ա՛խ գաւակներս, Լեռներն անգամ անխօս են, Իսկ շառաչող քամին կը բացալանչէ՛ Վիշտս մեծ է իմ հզօր Արցախ:

Արծուաբոյն իմ երկիր, Քու անմահ հերոսներդ պիտի ժայթքեն հողէն, պիտի յառնեն ու սլանան լեռներն ի վեր հուրէ սուրը իրենց ձեռքին:

Արծուաբոյն իմ երկիր, իմ Արցախ, Ծնկի պիտի չգան գաւակներդ, Նոյնիսկ երբ հարուածը ուժգին է, Ու թիկունքը անգամ վիրաւոր: Վկայ ամրաբերդ Շուշին, Վկայ արիւնը մեր հերոսներուն Եւ վկայ մեր դարաւոր Արցախը:

Որպէս արծիւ կը ճախրեն հերոսներուս հետ միասին կը սլանանք այս անարդար աշխարհն ի վեր, այս անգամ մարդկութեան արդարութիւնը մեր ժամիքներուն մէջ առած ու բռնցքի հարուածը գալիքին մէջ պարփակած:

Էջը կազմեց Նուսէ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ